

Մեկ Մայիսի «Աշխատաւորներու Օր» ուսան առիթով, «Ազդակ» լոյս չի տեսներ վաղը՝ Հինգշաբթի, 2 Մայիսին: Մեր յաջորդ թիւը՝ Ուրբաթ, 3 Մայիսին:

Արաբական «Էյ. Էն. Էս.» հեռատեսիլի կայանի հետ կրողի մը ընթացքին Արաբական պաշտպանութեան նախարար Սաֆար Ալիեյ յայտարարեց, թէ «բոլոր գիտեն, թէ Լեոնային Ղարաբաղը անբաժանելի մէկ մասն է Արաբական», եւ թէ «բնագրուման տակ գտնուող տարածքներու ապստամբութիւնը միայն ժամանակի հարց է»:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԸՆԴԴԷՄ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՆ

(Աշխատաւորներու Օրուան առիթով)

Համաշխարհայնացման եղելոյթի ներկայ պայմաններուն մէջ եւ ընկերվարական գաղափարախօսութեան արձանագրած նահանջին դիմաց Մայիս 1ը կրկնակի խորք, բովանդակութիւն ու իմաստ կը ստանայ, աշխատաւորական օրուան յիշատակումին առընթեր, մարդկային իրաւունքներու եւ շահագործման երեւոյթներուն դէմ կեցած ճշդելոյ առումով:

Մայիս 1ի խորհուրդը նախ մեր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ լիբանանեան մեր հայրենիքին ընկերային-տնտեսական այսօրուան ոչ միտարարական եւ անհեռանկարային իրավիճակին վրայ: Տնտեսական ծրագիրներու ապարդիւն փորձերը եւ արագ մագլցում արձանագրող սղաճը երկիրը առաջնորդած են անդունդի սեւին եւ պատճառած աշխատաւոր դասակարգի տակաւ թշուառացումը: Նման երրորդ աշխարհի պետութիւններու պարզած իրավիճակին, Լիբանանն էս, որոշ խաւի մօտ դրամագլուխի կուտակման իբրեւ արդիւնք, այսօր կ'ապրի ընկերային դասակարգերու միջեւ խրամատի խորացման սուր տագնապ. տագնապ մը, որ վարագցման ներկայ կշռոյթով շուտով կրնայ ջնջել «միջին դասակարգ»ի երեւոյթը:

Կենսամակարդակի արագընթաց այս անկումին դիմաց կը պակսին նաեւ քաղաքացիական տարրական ծանայութիւնները: Հանրային փոխադրամիջոցներու ոչ կապակերպ իրավիճակը, օրէ օր բարձրացող վառելանիւթի գիները, պետական հիւանդանոցային սպասարկութեան անբաւարար իրականութիւնը, ընկերային օժանդակութիւններու պետական մակարդակի բացակայութիւնը իրողութիւններ են, որոնք աւելիով կը յուսալքեն լիբանանեան քաղաքացին, որ հետպիտէ կը յօգնի իր հայրենիքին ապագային հաւատարմութիւնը եւ իր այդ հաւատարմութիւնը մնայու պայքարին մէջ:

Ճիշդ է, որ տնտեսական տագնապը տեղական պատճառականութիւն չունի միայն. անոր տարողութիւնը շրջանային եւ, ինչու չէ, նաեւ միջազգային բնոյթ ունի: Քաղաքացիական պատերազմին դուրս եկող երկրի մը համար ենթակառոյցներու արմատապէս կայացման հրամայականը եւ քաղաքաշինութեան անհրաժեշտութիւնը կ'ենթադրէ Լիբանանը բաղկացնող բոլոր համայնքներու ամբողջական ուժերու գերախորում եւ նպատակաւոր շրջանային աշխատանք: Իսկ համայնքներու համակեցութիւնը, անոնց կապակերպ աշխատանքը եւ համայնքային ներուժի ամբողջական օգտագործումը՝ ի խնդիր Լիբանանի բարգաւաճման, կ'ենթադրէ նախ եւ առաջ բոլոր համայնքներու իրաւունքներու յարգում: Միայն այս պարունակին մէջ կարելի է դիտել ու ընկալել վաղուան Լիբանանին համար առաջադրուած ընկերային-տնտեսական կայունութիւնն ու լիբանանեան քաղաքացիներուն արժանապատիւ կենցաղը:

Մայիս 1ի խորհուրդը ազգային թելադրանքներ ունի նաեւ հայաստանեան կողմն աշխարհի: Խորհրդային Միութեան փլուզումով տնտեսական համակարգի անցումային վիճակը բնութագրուեցաւ հայրենի օրուան իշխանութիւններուն հաստատած «ապատ շուկայական» տարապիւն տակ վայրագ ու անվերահսկելի տնտեսական համակարգով: Փաստօրէն, ստուերային գործարարներու սերտաճումը օրուան պետական գործիչներուն հետ, Հայաստանի մէջ ստեղծեց «ապարանքային վարչախումբ» մը, որուն բաղկացնող տարրերը այսօր կա՛մ փախստական վիճակի մէջ են եւ կա՛մ ալ մինչեւ վերջերս՝ քաղաքական մենակեցութեան: Հայաստանի տնտեսութիւնը բարելաւելոյ կարգախօսը բարելաւեց երէկուան պետական գործիչներուն անձնական տնտեսութիւնը: Այդ պատրուակին տակ եւ կասեցնելու համար Հայաստանի Հանրապետութեան շրջափակումը՝ կ'առաջադրուէր առանց նախապայմանի բարի դրացնութիւն խաղալ ցեղասպան թուրքին հետ եւ

Շար.ը՝ էջ 10

ԻՍՐԱՅԷԼ ՄԵՐԺԵՑ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՏԱԼ ՄԱԿԻ ՔՆՆԻՉՆԵՐՈՒՆ՝ ԺԵՆԻՆԻ ԳԱՂՈԱԿԱՅԱՆԻՆ ՄԵՋ ԸՆՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ



Իսրայէլացի զինուորները կը խուզարկեն պաղեստինցի մը, որ դուրս եկած է Ս. Օճղեան տաճարէն:

Իսրայէլ երէկ որոշեց ժենիւնի գաղթականացնելն հեռու պահել ՄԱԿի քննիչները: Իսրայէլ կ'ըսէ, որ ՄԱԿի առաքելութիւնը ընդունելու համար ներկայացուցած պայմանները չեն գործադրուած. հետեւաբար,

քննիչները չեն կրնար ժենիւնի մտնել: Պաղեստինցիները կ'ըսեն, որ իսրայէլեան բանակը զանի մը հարիւր հոգի ջարդած ու աւերմար գործած է գաղթականացնելն մէջ: Իսրայէլ կը հերքէ, որ պատերազմի ոճիրներ գործած է, պնդելով, որ սպաննուած 52 պաղեստինցիները մեծ մասամբ զինեալներ ու «ծայրայեղականներ» էին: Իսրայէլ կ'ըսէ նաեւ, որ ժենիւնի բախումներուն սպաննուած են իսրայէլացի 23 զինուորներ:

Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Եասէր Ապտ Ռապպո զատապարտեց իսրայէլի կառավարութեան որոշումը, շեշտելով, որ պաղեստինցիները ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդէն պիտի պահանջեն պատժամիջոցներ հաստատել իսրայէլի դէմ:

Ապտ Ռապպո աւելցուց, որ կառավարութեան որոշումը, որ կ'արգիլէ ՄԱԿի առաքելութիւնը, ինքնին պատերազմի ոճիր է պաղեստինցի ժողովուրդին դէմ եւ կը հաստատէ իսրայէլեան բանակին գործած ջարդը գաղթականացնելն մէջ:

Կառավարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէ, որ իսրայէլ ՄԱԿէն պահանջած է, որ խմբակը պարզապէս ընդհանուր քննութիւն կատարէ, որ սակայն հետաքրքրութեան մը աստիճանին չհասնի եւ մանաւանդ՝ եզրակացութիւններ չյայտարարէ: Իսրայէլ կը պահանջէ նաեւ, որ իր հակակշիռին տակ ըլլան իսրայէլացի ականատեսները, որոնք վկայութիւն պիտի կատարեն: ՄԱԿ նաեւ պէտք է երաշխաւորէ, որ այդ վկայները դատական հետապնդումէ հեռու պիտի մնան: Կառավարութեան յայտարարութիւնը կը նշէր նաեւ, որ այնքան ատեն, որ այս պայմանները չեն ընդունուած, իսրայէլ պիտի չարտօնէ քննութիւնը: Արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս իր կարգին նամակ մը ուղարկեց ՄԱԿի ընդհանուր բարտուղար Բոնֆի Անանի՝ պահանջելով, որ քննիչ խմբակը միայն քննութիւն կատարէ՝ եւ քանակ արժեքներով կատարելու եւ եզրակացութիւններ յայտարարելու:

ՄԱԿի քննիչ խմբակը օրերէ ի վեր պատրաստ

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱԱՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆ



Պատուիրակութիւնը վեհափառին մօտ Լուսակարը՝ սփիւտի «Աշխատի»

Երէկ առաւօտ, 30 Ապրիլ 2002ին, Արամ Ա. վեհաբանի դահլիճին մէջ ընդունեց Պաաս Կուսակցութիւնը ներկայացնող 10 հոգիներէ բաղկացած պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ կուսակցութեան Ծար.ը՝ էջ 10

ՊԱԱՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ Հ. Յ. Դ. «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԱՎՈՒՄԲ



Լուսակարը՝ սփիւտի «Աշխատի»

Պաաս Կուսակցութեան ղեկավար Ասէմ Քանսոյի գլխաւորած պատուիրակութիւնը երէկ այցելեց Հ. Յ. Դ. «Սարդարապատ» ակումբ եւ տեսակցութիւն մը ունեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին հետ: Հանդիպումին քննարկումի առարկայ դարձան տեղական, շրջանային գործաշուկաները եւ յատկապէս պաղեստինեան շրջաններուն իրավիճակը: Նաեւ խորհրդակցութեան նիւթ դարձան երկու կուսակցութիւններուն միջեւ գործակցութեան հեռանկարները: Հանդիպումին ետք, Պաաս Կուսակցութեան եւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութիւնները միասնաբար ուղղուեցան Անթիլիաս, տեսակցութիւն մը ունենալու համար Արամ Ա. վեհափառ հայրապետին հետ:

«Ա...»

To the Press Attaché of the Turkish Embassy in Lebanon

Your article in the 27 April 2002 issue of "Safir" newspaper was not surprising. Obviously it is part of the denial policy your government applies against the Armenian Genocide.

The "corrections" you want to make are only distortions of historical truths which have been recorded both as evidence and as historical facts.

The number of those parliaments which have officially recognized the Armenian Genocide provide enough testimony.

As for your assertions concerning the parallels between the Armenian and the Palestinian causes, there is no doubt that your attitude is a further sign of your reluctance to admit the truth. The government carrying out murderous acts against the Palestinians is the government of Israel, your strategic and political ally. We have two common denominators here: Turanic and Zionist genocidal policy on the one hand, and the justified struggles of the Armenian and Palestinian peoples on the other. One should not use maneuvering tactics in publicity to divert the reader's attention away from the truth.

The facts are so clear that we are sure "Safir" readers will not fall into the trap you have set.

Wishing acknowledgment of truths,

(signature)

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ԻՍԱՄ ՖԱՐԷՄԻ



Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպսկոպոսի երէկ այցելեց փոխ վարչապետ Իսամ Ֆարէսի: Սրբազան հօր կ'ընկերանային Քաղաքական ժողովի ատենապետ Վահագն Դաւիթեան եւ քաղաքական ժողովի անդամ Վրէժ Սապունճեան:

Սրբազան հայրը առաջին հերթին շնորհակտութեամբ իսամ Ֆարէսը Ռուսիոյ Ալեքսէյ Բ. պատրիարքին կողմէ բարձրագոյն շքանշանի արժանանալուն առիթով: Սրբազան հայրը նաեւ գրուատիքով խօսեցաւ Ֆարէսի վայելած վարկին մասին՝ տեղական եւ միջազգային շրջանակներու մէջ:

Հանդիպումին քննարկումի առարկայ դարձան Լիբանանի կրթական մարզին դիմագրուած դժուարութիւնները յաղթահարելու միջոցները:

Շար.ը՝ էջ 10

ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԲԱՐՕՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անկախ այն հարցից, որ ճշգրիտ երբ, ուր կամ ինչ պայմաններում տակ ծնունդ առած է «Աշխատաւորներու Օր»ը, ամէն տարուան Մայիս 1ին նշուող այս տօնը ամբողջ աշխարհի տարածքին զգեցած է կարեւոր նշանակութիւն. արժեւորել աշխատող ձեռքը եւ միտքը, «վարձքը կատար» ըսել ըլլողը այն աշխատաւորներուն, որոնց քրտինքին արդիւնքը կը վայելենք ամէն օր:

Իր այս տօնական գունաւորումին աւելնելով Մայիս 1ը, շուրջ 150 տարուան իր հետեւողականութեամբ, ՉՈՐԵՔՈՒԹԻՒՆ հասցուց աշխատաւորութեամբ հե-



տաքըրուելու, անոր ապրելակերպը բարելաւելու ու իրաւունքները պաշտպանելու հրամայականը: Այս առումով է, որ «Աշխատաւորին Օր»ը սոսկական արձակուրդ մը չէ, այլ կը շարունակէ մնալ նպատակներու հետապնդումին եւ դատերու պաշտպանութեան նոր թափ ու եռանդ տուող առիթ:

Մայիս մէկեան հարեւրամեայ անանգութիւն է տարբեր երկիրներու մէջ կազմակերպել հաւաքներ, համաժողովրդային տարողութեամբ ցոյցեր, որոնք եթէ աշխատաւորական համագործակցութիւններու



կազմաւորման սկզբնական հանգրուաններուն կը պահանջէին արդի աշխարհին բանուորին համար արդէն իսկ կեանքի իրականութիւններ դարձած տարրական իրաւունքներու, ինչպէս՝ 8 - 9 ժամ տեւողութեամբ աշխատանքային օրուան, տարեկան եւ շրաթական արձակուրդի օրերու, աշխատանքային ապահովագրման ապահովումը, ապա անոնք այսօր իրենց սլաքը դարձուցած են դէպի այլ ուղղութիւններ՝ դարձեալ միշտ նկատու ունենալով տեղական ընկերութեան եւ ապա՝ մարդկութեան բարօրութիւնը:

Լափախսեան ճշմարտութիւն է հաստատել, թէ աշխատաւորներու շարքը մտնելով Մայիս 1-ի նախօրեակին, որ օրինակ իր հարեւրակիցներուն հետ միասին կը կատարեն իրենց օրընտրած գործը:

ՄԱՀԱՉԳ

Հ. Յ. Դ. «Դրօ» Կոմիտէն կը գումէ իր շրջանի ընկերներէն՝

ԳՐԻԳՈՐ ԳՈՃԱՅԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 30 Ապրիլ 2002ին:

ՄԱՀԱՉԳ

- Տիկին Մովսէս Գոնձայեան եւ զաւակները՝ Ռազմիկ, Իշխան եւ Ռիթա Տէր եւ տիկին Պետրոս Գոնձայեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Նազարէթ Գոնձայեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Պարտաւար Գոնձայեան եւ զաւակունք Տիկին Իսկուհի Գոնձայեան եւ զաւակունք Տիկին Արփինէ Սալաւորեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Մովսէս Թոփայեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յարութիւն Տեմիրճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յակոբ Պարախեան եւ զաւակունք Տիկին Շնորհակ Պարախեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գումեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին:

ԳՐԻԳՈՐ ԳՈՃԱՅԵԱՆԻ (ՏՈՆԵԱՎ՝ 1944ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 30 Ապրիլ 2002ին, երեկոյան ժամը 6:00ին արտի տագնապի պատճառով: Թուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 1 Մայիս 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պերճ Համուրի Ազգային գերեզմանատունը: ●Ներկայա ընդունիլ իբրեւ մահապղ: ●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Արագած թաղ:

ՇԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅՆԵՐՈՒ ԿԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԻ ԸՆՆԱՐԿՈՒՄ

Խորհրդարանական յանձնարարութեամբ երէկ գումարեցին միացեալ նիստ մը քննարկելու համար հարողակցութեան մարզի վերակազմակերպման օրինադիւր, որ պիտի յանգի հարողակցութեան միջոցներու ապագեականացումին:

Ժողովը գլխաւորեց խորհրդարանի նախագահ Նեպոլի Պրորի: Ներկայ էին վարչապետ Ռաֆիք Հարիրի, նախարարներ Ժան Լուի Բրտաչի, Ֆուատ Սիմոն, Պասէլ Տէյէհան եւ Պըշարա Մըրհէ:

Ժողովը որոշ բարեփոխումներէ ետք վաւերացուց արդարութեան եւ պետական վարչամեքենայի խորհրդարանական յանձնարարութիւնը որդեգրած տարբերակը:

Բարեփոխումներէն կ'արժէ նշել ապագեականացումի պարագային լիբանանեան կողմի վերապահուած 20 առ հարիւր համեմատութիւնը ընդելու որոշումը, որ տրուեցաւ քուէարկութեամբ:

Ժողովը յետ քննարկումի նաեւ որոշեց, որ ոչ մէկ հակադրութիւն կամ խաչաձեւում կայ օրինագիծի նախատեսած հարողակցութեան մարզի գերագոյն մարմինին եւ ապագեականացումի հարցերու գերագոյն խորհուրդին միջեւ:

Հարցը սակայն օրինագիծի 50րդ յօդուածէն է, որ կը վերաբերի հարողակցութեան միջոցներու նախարարութեան եւ Օժերոյի պաշտօններու եւ աշխատաւորնե-

րու ճակատագիրին: Վարչապետ Ռաֆիք Հարիրի կողմէն յարցը այս առնչութեամբ որդեգրելու կառավարութեան պատկերացումը, հատուցումի փոխարէն հրաժարելու գծով, եւ մերժելու արդարութեան եւ պետական վարչամեքենայի հարցերու խորհրդարանական յանձնարարութեան վարչապետի մէջ մնալ կը նախատեսէ ոմանց պարագային:

Յանձնարարութեան նախագահ եւ միացեալ ժողովի գեկուցաբեր Երեսփոխան Սըրայէլ Տահէր ըսաւ, որ այս կէտէն դուրս համախոհութիւն կար, եւ որոշուեցաւ այս Ծարը՝ էջ 9

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՊԱՏՐԱՍՏ Է

Աշխատանքի նախարար Ալի Քանու «Աշխատաւորներու Օր»ուն նախօրեակին տրուած մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ նախարարութեան, աշխատաւորներու եւ գործատէրերու ներկայացուցիչներէ կազմուած եռակողմանի յանձնարարութիւնը արդէն պատրաստ է աշխատանքի նոր օրէնքի նախագիծը:

Քանու յայտնեց, որ նոր տարբերակի կ'ընտրուի արդէն գործի ապաստանութիւնը, կը հաստատուի կիսամի ամիս աշխատանքի դրութեան օրինական կանոններ, աշխատաւորները կը պաշտպանուին կապուած երկրի, գոյնի, կրօնի, սեռի կամ քաղաքական պատկանելիութեան պատճառով: Խորհրդարանի վերաբերմունքէ, եւ ընտրեց մարկուսի կամ վերադարձուած համար վարձուած արձակուրդներ:

Քանու ըսաւ, որ օրինագիծը կը պաշտպանէ պատանի աշխատաւորներու իրաւունքները, ատողութիւնը եւ ապահովութիւնը, արգիլելով 14 տարեկանէն արագ աշխատանքը եւ որոշ աշխատանքներ:

«Նոր օրէնքին մէջ վերջ պիտի դրուի սեռային խտրութեան եւ այլնորն ու կիները համարժէք աշխատանքի հասարակ տնտեսական աշխատա-

վարձք», ըսաւ ան, յայտնելով, որ արձակուրդներու գծով բարեփոխումներ կը կրեն անուսուրթեան, հայր դառնալու միջին չորրորդ աստիճանի հարապատեցումը մահուան աղիթով վճարուած արձակուրդները, իսկ ծննդաբերութեան պարագային մարդերու վճարով արձակուրդները 7 շաբաթ են:

Ասոնց կողքին նախագիծը կ'անդրադառնայ նախագոյն ամսականի, աշխատանքի կապուած կերպով եւ հանգրսուեան կողմէն պարագային ներու ու հարցերուն, եւ կը վերահաստատէ սեւեռներու եւ համադաշնակցութիւններ հիմնելու իրաւունքը, բացառու-

թեամբ պետութեան պիտեալ ուժերու եւ դատաւորներու ասպարէսներէն ներս:

Մամլոյ ասուլիսին ընթացքին Քանու հաստատեց անհրաժեշտութիւնը՝ բարեկարգելու ընկերային ապահովագրութեան ապագային սնտուկը, եւ յայտնեց, որ ծրարութեան ապահովագրութեան ծրագրին գծով իր նկատողութիւնները արդէն յղած է նախարար խորհուրդին:

Քանու վստահեցուց, որ կը շարունակէ լիբանանցի աշխատող ուժի պաշտպանութեան համար օտար աշխատաւորներու գծով խիստ միջոցառումներ որդեգրելու քաղաքականութիւնը:

ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՆ ՀՆԱԽՔ

Լիբանանեան կուսակցութիւններու եւ պաղեստինեան հատուածներու համախորհուրդի յանձնարարութեան կազմակերպութեամբ, երէկ Էշրեֆիէի Սաճէս եկեղեցւոյ արահին մէջ կայացաւ հաւաք մը, առ ի Կորակցութիւնի Արթըրեհէմի Ս. Օննդեան տաճարին:

Հաւաքին նախարար Ասատ Տիպայ ներկայացուց նախագահ Կոր. Էմիլ Լահուտը: Ներկայ էղան կուսակցական անձնաւորութիւններ եւ պատուիրակներ իրենց շարքին՝ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակներէն, ինչպէս նաեւ կրօնական անձնաւորութիւններ: Խօսք տնտեսութիւնը դատաւարութեան Ս. Օննդեան տաճարը պաշարման տակ պահելու իրաւունքին բանակին արարքը եւ պահանջեցին անյապաղ քակել այդ պաշարումը:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ԽՕՄԲԸ՝ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒՆ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ Մայիս 1ի նախօրեակին շնորհաւորական խօսք ուղղեց Լիբանանի աշխատաւորներուն, ընդգծելով, որ այս տօնը կը խորհրդանշէ նուիրումը, արտագողականութիւնը եւ նման արժէքները: «Այս տօնը միայն աշխատաւորներուն չի վերաբերիր, այլ նաեւ՝ գործատէրերուն, որովհետեւ անոնք աշխատաւորներուն հետ կը կազմեն մէկ ամբողջութիւն, որուն ներդաշնակութեան կախեալ է երկրին արտադրութիւնը», նշեց ան:

«Երկրին տնտեսական վիճակի բերմամբ այս առիթով պէտք է վերահաստատել, որ անհրաժեշտ է բոլորին՝ աշխատաւորներուն, գործատէրերուն քաղաքական, տնտեսական եւ ընկերային մարմիններուն մասնակցութիւնը երկիրը վերականգնելու ճիգին, պետական եւ սեփական մարզերու գործակցութեան միջոցաւ», ըսաւ ան, ընդգծելով, որ ուժեղ պետութիւնը տէր կրնայ կանգնել իր իրաւունքներուն եւ իր քաղաքացիներուն իրաւունքներուն, ըլլան անոնք պետական թէ սեփական մարզի մէջ, նաեւ կ'երաշխաւորէ երկրի եւ անոր տնտեսութեան հիմերու առողջութիւնը, մինչ սկար պետութիւնը, պարտքե-

Հ.Յ.Դ. Լ.Ե.Ս. ԳՐՕԵԱԿ ՄԱՍՆԱՅԻՂ

Հ.Յ.Դ. Լ.Ե.Ս. ԳՐՕԵԱԿ ՄԱՍՆԱՅԻՂ

ՇՈՒՇԻ ԵՎ ՍԱՏԱԳՐՄԱՆ ԿԻՐԵՆ ԶԵԲԵՐԵՆԻ ՆԱՀԱՍԱԿՈՒԹԵԱՆ

10 ԱՄԵԱԿ

ԲԱՆԱԽՕՍ՝ ԸՆԿ. ՅԱԿՈՒԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 8 Մայիս 2002, երեկոյան ժամը 8:00ԻԳ, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

ՍԼԱՔ

ԺԵՆԻՆԻ ՄԷՉ ՉԱՐԳ ԳՈՐԾՈՒԱԾ Է՝

Ժենինի պաղեստինեան գաղթականայնը այսօր վերածուած է աւերակներու: Իսրայէլեան բանակը հոն ներխուժեց եւ պաղեստինցի «ժայռայեղականներ» հետապնդելու ու ձերբակալելու պատրուակով քարուքար ըրաւ ամբողջ գաղթականայնը: Ամբողջ աշխարհին տրուեցաւ լաւագոյն բացատրութիւնը, Արիէլ Շարոնի պոլիտոլոգի քաղաքականութեան:

Մեր օրերուն բարեբախտաբար ոչինչ կը պահուի, յատկապէս երբ ոճիր գործադրուած է ժողովուրդի մը դէմ: Այս պարագային Ժենինի փոխանցուած պատկերները՝ յուսանքալար, ժապաւէն, վկայութիւն թէ տեղեկագրութիւն կը հաստատեն իրողութիւնը: Ժենինի մէջ շարդ գործադրուած է: Անմէջ պաղեստինցիները Կոն քաղաք են ու անմարդկային ոճիրներ գործադրուած են իսրայէլացի պիւտրները:

Ու այսպէս կը պատահի միշտ: Իր ոճիրը թաքցնելու հեւքին մէջ, ոճրագործը կը շփոթի ու ինք կու տայ փաստը՝ իր ոճիրին:

Թէլ Աւիւ ալ նոյնը ըրաւ, երբ արգիլեց ՄԱԿի քննիչներուն հետաքննութիւնը կատարել Ժենինի գաղթականայնին մէջ:

ՄԱԿի քննիչներուն դէմ դրուած իսրայէլեան արգիլքը լաւագոյն փաստն է, թէ Իսրայէլ շարդ գործադրած է գաղթականայնին մէջ: Այլապէս Իսրայէլ ի՞նչ ունի թաքցնելիք:

Ա. Ա.

ՇԱՀԱՆ Ծ. ԿՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ՝ ՏԵՂԱՊԱՀ ԽՅՖԱՀԱՆԻ ԹԵՄԻՆ

Իրանահնդկաստանի թեմի Պատգամաւորական Ժողովը, 29 Ապրիլ 2002ին միաձայնութեամբ առաջնորդական տեղապահ ընտրեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութեան անդամներէն՝ գերպ. Շահան Ծ. վրդ. Սարգիսեանը: Անցնող 25 տարիներուն, Նոր Ջուրայի պատմական այս թեմը վայելած էր հոգեւոր իսմարը եւ ներդրումը թեմի առաջնորդ Կորին արք. Պապեանի, որ այժմ կաթողիկոսական փոխանորդն է Բուէյթի եւ Արաբական Օղոյ երկիրներու թեմին:

Շահան Ծ. վրդ. Սարգիսեան Անթիլիասի երիտասարդ միաբաններէն է, ծնած 1963 թուականին Շալէպ: Կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1985ին եւ անդամագրուած Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան: Բարձրագոյն ուսումը կատարած է Պելճիքայի Լուվի համալսարանին մէջ հետեւելով հայրաբանութեան եւ հայագիտութեան: 1995ին սկսեալ կը վարէ Դպրեվանքի տեսչական պաշտօնը, խմբագիրն է «ԱՄԿ» հայագիտական տարեգիրքին եւ ատենադպիր՝ Կիլիկեան Ս. Աթոռի Կրօնական Ժողովին:

Ս. ՀՈՒՓՈՒՄԵՎԵՆՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԵՐԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՅՈՅ ՄԷՉ

Ի գիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին կու գանց յայտնելու, թէ Ս. Հռիփսիմեանց կոյսերու յիշատակին նուիրուած արարողութիւնները պիտի սկսին Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Հինգշաբթի, 2 Մայիս 2002ին մինչեւ Երկուշաբթի, 27 Մայիս 2002 ամեն երեկոյան ժամը 6:00ԻԳ:

Այս առթիւ Հինգշաբթի, 2 Մայիս 2002ի արարողութեան պիտի նախագահէ եւ աւուր պատշաճի քարոզը՝

ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ Առաջնորդ Լիբանանի հայոց թեմի

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու սոյն արարողութեան, վերանորոգուելու Ս. Հռիփսիմեանց հաւատքով եւ լսելու համար սրբազան հօր պատգամը:

ՆՈՐ ԱՍՆԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՅՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Նախագահութեամբ՝ ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Կազմակերպութեամբ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՅՅԱՄԵՐ ՏԻԿԱՆՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐՈՒ

Կը դասախօսէ Սփիւռքահայ վաստակաւոր բանաստեղծ ԺԱԳ Ս. ՅԱԿՈՒԲԵԱՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 3 Մայիս 2002ին, կէսօրէ ետք ժամը 7:00ԻԳ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Նոր Ատանա:

Կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը այս հոգեւոր դասախօսութեան:

ԿՐՕՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՏՐԱՊԵՉՈՆԻ ՄԵՁ ԹՈՒՐԲ-ԱԶԵՐԻ-ՎՐԱՅԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱԼԻԵԼ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳԱՊԸ ԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՆ ԿԸ ՀԱՄԱՐԷ

Թուրքիոյ հիւսիս-արեւելեան Տրապիզոն քաղաքին մէջ Երկուշաբթի օր սկսաւ Թուրքիա - Ալբանիայի միջազգային վեհաժողովը, մասնակցութեամբ երեք երկիրներու նախագահներ՝ Ամին Լեւոնտի Սեյդի, Հայաստանի Ալիեւի եւ Էտուարտ Շեարտնաձէի:

Վեհաժողովի բացման նիստի ընթացքին իր արտասանած խօսքին մէջ Վրաստանի նախագահ Էտուարտ Շեարտնաձէ ըսաւ, թէ Կովկասի հարցերը պէտք է լուծուին երկխօսութեամբ եւ խաղաղ միջոցներով: Անդրադառնալով երեք երկիրներուն միջեւ գործակցութեան, Շեարտնաձէ ըսաւ. «Պարու - Թիֆլիս - ձեյխան քարիւղատարի ծրագիրը եւ Պարու - Թիֆլիս - Էրզրում չարախախտ Կովկասի խողովակաշարի ծրագիրը լաւագոյն ապացոյցներն են Թուրքիոյ, Ալբանիայի եւ Վրաստանի միջեւ համագործակցութեան եւ փոխ ըմբռնման»: «Հետեւաբար, մեր ճիգը՝ Կովկասը խաղաղութեան եւ կայունութեան շրջան մը դարձնելու, բնական է», աւելցուց Վրաստանի նախագահը:

Իր կարգին, Ալբանիայի նախագահ Հայտար Ալիեւ ընդգծեց, թէ Ալբանիայի մասնակցած է միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի բոլոր պայքարներուն, եւ ստորագրած է միջազգային ահաբեկչութեան, կապակերպուած յանցագործութեան խմբակներու, թմրեցուցիչի, պէտքերու եւ մարդոց մաքսանենգութեան դէմ պայքարի բոլոր համաձայնագիրները: Խօսելով Կովկասի մասին՝ Ալիեւ ըսաւ. «Կովկասի քաղաքական կայունութեան եւ տնտեսական վարագցման հիմնական նախապայմաններէն է շրջանային ապահովութեան վերահաստատումը», որ ըստ Ալիեւի, կարելի կ'ըլլայ առկայ տագնապներու խաղաղ լուծումը եւ բազմակողմանի համագործակցութեամբ:

Լեւոնտի Ղարաբաղի տագնապին եւ Հայաստանի հետ յարաբերութիւններուն անդրադառնալով՝ Հայտար Ալիեւ ըսաւ. «Լեւոնտի Ղարաբաղի հարցը շրջանի անկայունութեան հիմնական գործոններէն է»: «Եթէ Հարաւային Կովկասը չվերածուէր հակամարտութիւններու

շրջանի մը, այսօր տարբեր պատկեր մը պիտի պարզուէր», ըսաւ ան, աւելցնելով, որ «Ալբանիայի տարածքներուն 20 առ հարիւր բռնազրուումը, Վրաստանի տարածքային անձեռնմխելիութեան խախտումները, եւ այլ հարցեր կը սահմանափակեն համագործակցութեան առիթները»: Ալիեւ ընդգծեց, որ ապահովական նոր համակարգ մը պէտք է ստեղծել, հիմնուած հասարակաց նախաձեռնութիւններու վրայ:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՈՐՈՎՈՐՈՒՄ

Թուրքիոյ, Ալբանիայի եւ Վրաստանի նախագահները երկվ ստորագրեցին անվտանգութեան համաձայնագիր մը, որուն նպատակն է «ահաբեկչական յարձակումներէ պաշտպանել Պարու - Թիֆլիս - ձեյխան քարիւղատարը», որուն շինութիւնը պիտի արժէ 2,9 միլիարտ տոլար:

Նախագահներ Սեյդի, Ալիեւ եւ Շեարտնաձէ շեշտեցին, թէ համաձայնագիրը պիտի ծառայէ «ահաբեկչութեան, կապակերպուած յանցագործութեան եւ այլ ոճիրներու դէմ պայքարին, եւ այլ երկիրներու դէմ դաշինք մը չի ներկայացնէ»:

Իր կարգին Հայտար Ալիեւ համաձայնագիրի ստորագրումէն ետք յայտարարեց, թէ «հիմը դրուած է արեւելք-արեւմուտք միջանցքի պաշտպանութեան եւ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ ետակողմանի համագործակցութեան»:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ՎԱՂԸ ԿԸ ՄԵԿՆԻ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան վաղը պիտի մեկնի Հարաւային Ամերիկա: Նախագահը պաշտօնական այցելութիւններ պիտի տայ Արժանթին, Ուրուկուէյ եւ Պարագվէ: Անոր գլխավորած պատերազմութեան մաս կը կազմեն Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, մշակույթի, երիտասարդութեան հարցերու, եւ մարմնամարզի նախարար Ռոյանտ Շառոյեան, առեւտուրի եւ տնտեսական գործարարի նախարարի տեղակալ Տիգրան Դաւթեան եւ այլ պաշտօնատարներ:

Նախագահ Քոչարեան հանդիպումներ պիտի ունենայ նշեալ երկիրներու նախագահներուն եւ կառավարական ու խորհրդարանական բարձրաստիճան պաշտօնատարներու հետ: Նախագահը նաեւ հանդիպումներ պիտի ունենայ Արժանթինի, Ուրուկուէյի եւ Պարագվէի Հայկական Համայնքներուն հետ: Պատերազմութիւնը Երեւան պիտի վերադառնայ Մայիս 9ին:

ՅՐԱՆՍԱՅԻ ՄԷՁ ԲԱԶՄԱԹԻԻ ՅՈՅՅԵՐ ԿԸ ՆԱԽԱՏԵՍՈՒԻՆ ԱՅՍՕՐ

ՓԱՐԻՉ, 30 (ՌՈՑ-ԹԸՐԶ).- Յրանսայի մէջ Զորքաբեր Օր (այսօր) բազմաթիւ ցոյցեր պիտի կայացուին, ընդհանրապէս ծայրայեղ արձակուրդներով պիտի գտնուին Երբ Լը Փէնի դէմ, սակայն նաեւ թեր:

Ոստիկանութիւնը Երեքշաբթի օր յստակ դարձուցած է, թէ խողովակեան նուազագոյն նշանին խտի պիտի միջամտէ:

Մայիս մէկի Աշխատաւորական Օրուան ցոյցերը (միայն Փարիզի մէջ 5 ցոյցեր կը նախատեսուին) գագաթնակէտը պիտի ըլլան ձեւազանգակի ազդեցութիւնը ունենցող շարք մը ցոյցերու շուրջը 2 շաբաթ առաջ նախագահական ընտրութեանց առաջին հանգրուանին Լը Փէնի արձանագրած յանձնարարներէն ի վեր:

Սենտիքաներ, ռուսները, ճնշում բանեցնող խմբակներ եւ ձախակողմեան կուսակցութիւններ իրենց ուժերը միացուցած են՝ Լը Փէնի դէմ հաւաքներու մասնակցելու համար: Անոնք կը յուսան, որ շուրջ 70 քաղաքներու մէջ հարիւր հազարաւոր ցուցարարներ պիտի մասնակցին ցոյցերուն:

ՎՐԱՅԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՄԱՐԶԵԼՈՒ ԶԱՄԱՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՍԿԱՆ ՎՐԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԵԼ

ԹԻՖԼԻՍ, 30 (ՌՈՑ-ԹԸՐԶ).- Ամերիկացի զինուորական մասնաճակատները Երկուշաբթի գիշեր սկսած են վրաստան հասնել, անոր բանակին օգնելու համար, որ իւրաքանչիւր ծայրայեղականներու դէմ պայքարի ահաբեկչութեան դէմ ամերիկեան զինուորական ջանքերը արշաւին ծիրէն ներս:

Մ. Նահանգներու մէջ Սեպտեմբեր 11ի ահաբեկչական յարձակումներէն ետք, ամերիկեան բանակը հետզհետէ աւելի ներկայ է նախկին խորհրդային Միութեան եւ մասնաւոր կեդրոնական Ասիայի մէջ:

Ամերիկացի մասնաճակատները ենթահող կը պատրաստեն շուրջ 200 բանակային մարզիչներու, զորս Ուաշինկթըն խոստացած է զրկել Վրաստան, որ 1991ի անկախութենէն ի վեր անկատարականութեան հարց կը դիմադրուէ:

20 հոգիէ բաղկացած այդ առաջին խմբակին մաս կը կազմեն գումակային եւ հարցազնութեանց մարզերու մասնաճակատներ, որոնք պիտի պատրաստեն «ենթակառուցը, որպէսզի զինուորներուն մարզումը սկսի», յայտարարեց պաշտպանութեան փոխ նախարար Ճիլա Պետրոպիլի Երեքշաբթի օր: Ամերիկեան ղեկավարներուն յայտնած է, թէ «մարզումի եւ սարքաւորումի» ծրագիրը կը նպատակադրէ օժանդակել Վրաստանի, որ իսլամական ծայրայեղականներու դուրս բերուին ընդհանրապէս օրէնք չզանչող

Փանքիսի կիրճէն, Ռուսիա կ'ըսէ, որ կիրճը նաեւ ապաստան է ըմբոստ Զեչենիայէն գիշերակցութեան: Անիկա սկսելու համար գանգատած էր ամերիկեան յաւելեալ ուժերու իր աւանդականներէն ազդեցութեան գոտիին մէջ հաստատուելու կարելիութիւններուն դէմ:

Սակայն աւելի ուշ, Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին յայտնած էր, թէ քայլը «ողբերգութիւն մը չէ» ռուսական շահերուն համար:

Ամերիկեան ուժերուն ժամանակը կ'ըլլայ Փութին - Ճորճ Պուշկինի միջոցով մը քանի մը շաբաթ առաջ: Անոնց յարաբերութիւնները Սեպտեմբերի յարձակումներէն ի վեր հետզհետէ աւելի ջերմացած են:

ՎԱՏ ՎԻՃԱԿԻ ՄԵՁ ՈՒԾԵՐ

Վրաստանի զինեալ ուժերը վատ վիճակի մէջ կը գտնուին, լաւ էն մարզում եւ երբեմն ըմբոստանալու հակում ունին:

Թիֆլիս պաշտպանութեան մարզին տարեկան 17 միլիոն տոլար կը ծախսէ, ինչ որ մէկ չնչին համեմատութիւնն է՝ 64 միլիոն տոլար գումարի մը, զոր Փենթագոնը կ'ըսէ, թէ պիտի ծախսէ՝ վրացական ուժերուն մարզումի «համեստ» ծրագիրին համար:

Մ. Նահանգներ մարզուելիք ուժերուն պիտի հայթայթեն տարազ, փոքր զէնքեր, զինամթերքեր, հաղորդակցութեան սարքեր, մարզումի եւ բժշկական սարքեր, վառելիքի եւ կառուցման նիւթեր:

Վրաստան կը յայտնէ, որ շուրջ 2000 զինուոր եւ սպայ պիտի մասնակցին մարզումի ծրագիրին, ինչ որ կը համապատասխանէ հետեւակներու եւ սահմանապահ զինուորներու շուրջ չորս գործառնաբեր, ինչպէս նաեւ

պիտի ձեռնարկուի ցամաքային ուժերու հրամանատարութեան եւ պաշտպանութեան նախարարութեան անձնակազմերու մարզումներու:

Ամերիկացի պաշտօնատարներ ըսած են, որ գետնի վրայ մարզումները տեղի պիտի ունենան ամառը եւ պիտի տեւեն երեքէն չորս շաբաթ: Անոնց պիտի մասնակցին նաեւ սահմանապահ ուժեր եւ վրաստանի ապահովութեան մարզի այլ գործակալութիւններ, ապահովելու համար, որ երկրին ապահովութեան ամբողջ ուժերը պիտի կարենան գետնի վրայ միասնաբար գործել:

Ամերիկացի մարզիչներու վրաստան զրկուելը դիւստաբարութեան «հարած մը» նկատուած է նախագահ Էտուարտ Շեարտնաձէի կողմէ:

Մոսկուա կ'ըսէր ամէն գնով իր սեփական ուժերը զրկել Փանքիսի կիրճը, չնչին զինեալները հետապնդելու համար, սակայն Թիֆլիսի եւ Մոսկուայի միջեւ յետապնդութիւն յարաբերութեանց լարուած վիճակը, ցարդ մղած է Շեարտնաձէին մերժելու, որ անոր զինուորները իր երկիրը գան:

Արդէն իսկ լարուած յարաբերութիւնները աւելի եւս ճնշումներու ենթարկուած էին այս ամսուան սկիզբը, երբ, առանց հրաւիրուելու Ռուսիա տասնեակներով ծայրօրէն զինուած խաղաղարար ուժեր զրկած էր Վրաստանի մէկ այլ կիրճը՝ ըմբոստ Աբխազիայ մօտակայ:

24 ժամ ետք, ուժերը քաշուած էին, սակայն կարգ մը մեկնաբաններ այդ քայլը յստակ նշան մը նկատած էին՝ ուղմարզումի ծրագիրին, ինչ որ կը համապատասխանէ հետեւակներու եւ սահմանապահ զինուորներու շուրջ չորս գործառնաբեր, ինչպէս նաեւ

ՌԱՅՍ ԻՐԱՆԸ ԿԸ ՆԿԱՏԷ «ՉԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔ»

Մ. Նախագահներու նախագահ ճորճ Պուշկինի պաշտպանութեան հարցերու խորհրդական Քոնստանտին Ռոյս Երկուշաբթի օր յայտնած է, որ ահաբեկչութեան հանդէպ իրանի ցուցմունքները եւ հաւաքակազմերը կը շարունակելու համար անոր ի գործ դրած ճիգերը պայն «յստակօրէն չարութեան առանցքին մէջ կը դնեն»:

Ռոյս կրկնած է վիճելի այն նախադասութիւնը, զոր Պուշկին անգամ գործածած էր Յունուար 29ին արտասանած իր խօսքին ընթացքին, նկարագրելով իրան, իրաքը եւ Հիւսիսային Բորէան իբրեւ «չարութեան առանցքի մը» մաս կապմող երկիրներ, որոնք կը փորձեն հաւաքակազմ քանդակելու պէտք ձգել: Երեք երկիրները հերքած են ամբաստանութիւնը:

Ռոյս յայտնած է, թէ իրանի մէջ չափաւորականները կը թուին մեծ ապրեցուցիչ չունենալ, եւ թէ «իրանի վարուելակերպը կը շարունակել մեծ հարց մը ըլլալ միջազգային քաղաքականութեան մէջ»:

Միւս կողմէ, առանց նշելու իրանը, իրաքը կամ Հիւսիսային Բորէան, Ռոյս ըսած է, որ կարգ մը թշնամի երկիրներ բնաւ Մ. Նախագահներու հանդէպ իրենց կեցուածքը պիտի չփոխեն:

(ՌՈՅԹԸՐԶ)



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԶԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ԵՒ «ԿԱՐԿԱՉ» ՄԱՆԿԱԳԱՍԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԵՐԸ

Կիրակի, 28 Ապրիլին, Արամ Ա. կաթողիկոս կաթողիկոսարանի վեհաժողովին մէջ ընդունեց Հայկապետան երգչախումբերը: Նոսթ առին երգչախումբերուն պատասխանատուները՝ ներկայացնելով երգչախումբերուն վերջին շրջանի գործունէութեան պատկերը: Ապա երգչախումբերուն անդամները կատարեցին քանի մը երգեր:

Վեհափառը գնահատեց զոյգ երգչախումբերուն անդամները. քաջակերպ և խառն մէջ վեհափառը թելադրեց բժախնդիր ըլլալ հայ մշակոյթին նկատմամբ, յատկապէս հայ երգին, որ այնքան դիւրաւ կ'աղաւաղուի ներկայ ժամանակներուն: Ան աղբարեարձակ այն երեւոյթին, որ գնահատեց կրօններ, նաեւ քրիստոնէական եկեղեցիներ, երգի ու երաժշտութիւնը օգտագործած են հոգեւոր ապրումներու աճման իրենց միջոց հաւատացեալներու կեանքին մէջ:

Իր խօսքի աւարտին, ղաւաճեցողի պահուի, վեհափառը խաչը բաժնեց հայ երաժշտական արուեստի փոքրիկ մշակներուն՝ օրհնելով անոնց ներկայութիւնը հայ մշակոյթի անդամներին մէջ:

ԱՐԱՄ Ա. ԳԱՍԱԽՈՍԵՑ ՀԵՂՈՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ

Ծարաթ, 27 Ապրիլին, Արամ Ա. կաթողիկոս ղաւախօսեց Հայց. Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ) անդամներուն՝ ներկայացնելով «Ինչ է հոգեւորութիւնը» (Սփիրիտուալիթի) նրութիւնը: Վեհափառը վերլուծեց ընդհանուր բացատրեց անոր քրիստոնէական արդի իմաստը՝ բաղադրեց իմաստը «քրիստոնէական կեանք վարել» ու տարբեր հասկացողութեանց հետ: Հոգեւորութիւնը աւանձնացած վիճակով, աշխարհէն հեռու իրականութիւն մը է, ըստ վեհափառի, այլ եկեղեցւոյ համայնական կեանքին մէջ օգտակարութեան նշանակուածութիւնը ունի: Քրիստոնէական վարքը կեանքով արտայայտելու կերպերուն մասին խօսելով՝ վեհափառը կարեւորութեամբ անդրադարձաւ անանձնական սիրոյ գաղտնիքին, որ քրիստոնէայ մարդուն արժանիքներէն մէկը նկատուի:

Գասախօսութեան աւարտին առիթ տրուեցաւ հարցուններու, որոնք կը վերաբերէին ապաշխարութեան հասկացողութեան, հոգեւոր շարժումներուն, հոգի-մարմին յարաբերութեան եւ ընդհանրապէս նման հարցերու գծով մեր եկեղեցւոյ կեցուններին: Այս բոլոր հարցերուն գծով լուսարանական պատասխաններ տուաւ վեհափառը:

ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆՔԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԿԱՆ ԳԱՍԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ԿԵԳՐՈՒԹԻ ՔԱՅՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԵԱՆ

Ուրբաթ, 26 Ապրիլին, Հայկապետան Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ պաշտօնական բացումը կատարուեցաւ Քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի նոր համալիրին, որուն ներկայ գտնուեցաւ Նարեկ Ծ. վրդ. Ալեքսանդրեան (վարիչ-քարտուղար միջ-եկեղեցական յարաբերութիւններու):

Հայր սուրբը, յանուն Բերիոյ Թեմի առաջնորդ Սուրբ Գալուստիանի, շնորհալոգեաց սուրբհայ Աւետարանական համայնքը այս հոգեւոր-դաստիարակական յարաբերումին համար:

Ապա, իրեն աւարտապատիւները Հայ Աւետարանական մայր եկեղեցւոյ եւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ միջեւ համագործակցութեան, ան յայտնեց, որ կեդրոնին գրադարանը պիտի օժտուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարանի հրատարակած բոլոր կրօնական-բարոյական գիրքերով:

Այս լուրը ներկաներուն կողմէ ընդունուեցաւ յատուկ գոհունակութեամբ:

ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆՔ ԳՐԻՍՏՈՆԵԱՆ ԻՍԼԱՄ ԵՐԿԻՍՏՈՒԹԵԱՆ

22 Ապրիլին, կազմակերպութեամբ Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին եւ «Հայտնութեան Քայլ» կազմակերպութեան, «Մերիտիկ-Քրիստոնեային» պանդոկին մէջ տեղի ունեցաւ միջօրեայ համագումար մը՝ «Քրիստոնէայ եւ իսլամ. կամրջող եւ հաշտարար» նրութիւն շուրջ:

Այս համագումարին նպատակն էր ի մի բերել երկու կրօններէն մարդիկ եւ քննարկել Միջին Արեւելքի դիմագրաւած զանազան հարցեր, մասնաւոր՝ 11 Սեպտեմբերին պատահած սարսափազդու զէպէջնետը: Այս համախմբումը կու գար նոր շնչոտ մը տալու յարաբերութեան մը, որ պիտի դիւրացնէր եւ ստեղծէր կամրջող երկխօսութիւն մը Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ:

Համագումարին ներկայ էին երկու կրօնները ներկայացնող եկեղեցական եւ աշխարհական մասնագէտներ, փորձեալներ եւ այս առիթով Ամբիկայէն, Բանտայէն եւ Անգլիայէն եկած դասախօսներ: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնն ալ իր մասնակցութեամբ բերաւ երկու միաբաններով՝ Պարթեւ վրդ. Կիլիկեան եւ Ներսէս արք. Մերձանեան:

«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ» մէջ որել ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունքը պահուի հրատարակման թուականէ առնուազ օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՉԳՆԵՐԸ բացառութիւն է: Մահագր կ'ընդունուի միայն ուղիղ գրով, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ԳԻՐՔ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Ընթերցանութեան սէրը զինք մղած է խորանալու գիրքերու գանձարանին մէջ, ուրկէ քաղած է իմաստութիւնները՝ մտածող մարդոց: Անոնք գրագէտներ եղած են՝ բանաստեղծներ, երգիչներ, փիլիսոփաներ, պատմագիրներ, որոնց իւրաքանչիւրէն քաղած է օգտակար ու չինիչ իմաստութիւն մը, զոր այս պարագային կարելի է նմանցնել մեծուի քաղած հրեւիթին՝ ծաղիկներէն բուրումնաւէտ:

Նախկին լիբանանահայ Լաթիքի Պէրպլէթեան կազմած է այս հատորը (234 էջ), եւ գայն «մկրտած» է «Գիրք իմաստութեան»: Իմաստութիւն խօսքերու, ժողովրդական առածներու եւ հեղինակները անծանօթ մտածողներու, իմաստասէրներու խօսքերը ի մի ամփոփուած են: Բազմահարիւր առակներ ու առածներ, մարդուն ստեղծագործ միտքէն ծնած ու մարդը զէպի իմաստութիւնը առաջնորդելու սահմանաւոր գրականութիւն մը, զոր մեզի կը ներկայացնէ գրաւոր այս հայը (այժմ՝ Լուս Անճելուսի բնակիչ): Ինչ խօսք, որ տարիներու յամառ ու հետեւողական աշխատանքի արդեւնք է այս: Մեր առօրեային մէջ յաճախ կը լսենք իմաստուն խօսքեր, խորտի փոխարէն փոխանցուած միտք մը, զոր շուտ կը մոռնանք, լուսագոյն պարզայայտ կը լինենք անոնցմէ մէկ քանին՝ գանոնք օգտագործելով յարմար պահուի: Բայց այս հատորը կարելի է անուանել «Իմաստուն խօսքերու ժողովածո», զոր կարելի է օգտագործել, օգտուիլ ու առաջնորդելի՜ եկած ու անցած հանճարեղ մարդու փորձառութիւնը նկատելով գանոնք:

Րաֆֆի Պէրպլէթեան գրասէրի ու յամառ ընթերցողի առաջին ձեռնարկը չէ այս. 1980ական թուականներու աւարտին ան լոյս ընծայած էր «Մայրերգ» խորագրով:

մնայ մեր սեղանին վրայ՝ իրեն մնայուն ներկայութիւն, որ յուշարարի դեր կը կատարէ մեզ զգուշացնելու վնասակար դիրքաւորմանէ: Անոնց միտքերէն ժայթքած տող մը իմաստութիւն կարողով կրնանք մեր օրը վերածել խաղաղ իրականութեան մը, արժեւորելու մեր շրջապատն ու իրողարձուցիւնները:

84 հեղինակաւոր անուններ կը տողանցեն այս հատորին մէջ, որոնց շարքին՝ 15 հայ հեղինակներու անուններ, որոնց միտքերը կը փայլին մարդկայնութիւնը արժեւորելու, կեանքը պատկերելու նախանձախնդրութեամբ: Մարդ պէտք ունի անկեղծ բարեկամի մը՝ նման գիրքեր լուսաւոր ճամբաներ բանալու ճակատագրուած են. անհրաժեշտ է ունենալ հաւատարիմ ակաճներ՝ լսելու համար պատգամները իմաստասիրութեան: «Գրպանի գիրք մը», որուն պէտք ունի մարդ ամէն քայլափոխին:

Գրողարանի մէջ պահուելու սահմանուած չէ այս հատորը, այլ պէտք է

ՇԱՀԱՆԳՈՒՄՍ

ԳՈԿՏ. ՍԱԼԷՀ ԶԱՀՐԷՏՏԻՆ՝ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲՈԼԷՃԻ ՄԷՋ

Ուրբաթ, 19 Ապրիլին, Հայ Աւետարանական քոլեջի մէջ տեղի ունեցաւ Հայկական Յեղասպանութեան 87ամեակին նուիրուած ձեռնարկ, որուն ընթացքին լիբանանցի պատմաբան ղոկոտ. Սալէհ Զահրէտտին դասախօսեց քոլեջի երկրորդական բաժնի աշակերտներուն:

Քոլեջի տնօրէն Զաւէն Մսրըբեան ներկայացուց լիբանանցի պատմաբանը եւ անդրադարձաւ օրուան խորհուրդին: Այնուհետեւ ղոկոտ. Սալէհ Զահրէտտին անդրադարձաւ Հայկական Յեղասպանութեան զրդապատճառներուն, տեղումէ (դաւանափոխ) հրեաներու ոճրային դերին, արաբ ժողովուրդին, ինչպէս նաեւ՝ հայութեան հանդէպ ցուցաբերած մարդկային կեցուններին: Հանդիսութեան փակումը կատարուեցաւ ուսուցիչ Ս. Հիլանիի խօսքերով:

«ՊԻԵԼՈՂՈՒՍԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Պիելոուսիոյ Միւսթեք մայրաքաղաքին մէջ 25 Ապրիլին տեղի ունեցած է նոր ստեղծուած «Պիելոուսիա - Հայաստան» ընկերութեան հիմնադիր ժողովը, որուն ընթացքին ընկերութեան նախագահ ընտրուած է Պիելոուսիոյ տեղեկատուութեան նախարար Միխայիլ Փոփկային, իսկ փոխ նախագահ՝ ճարտարագետ Արմէն Սարգսյան:

Ընկերութեան կազմին մէջ ընդգրկուած են գիտութեան եւ մշակոյթի գործիչներ, ինչպէս նաեւ՝ պաշտօնական կառուցներու եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

Հիմնադիր ժողովի աշխատանքին մասնակցած է նաեւ Պիելոուսիոյ մէջ Հայաստանի դեսպան Սուրէն Յարութիւնեան, որուն կարծիքով, բարեկամութեան նոր ընկերութեան ստեղծումը պիտի նպաստէ երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններուն զարգացման, ինչպէս նաեւ՝ գիտութեան ու մշակոյթի մարդերուն մէջ սերտ համագործակցութեան:

ԸՆՀԱՍՏԱՆ - 2005

ԵԻՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՑԹԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ըստ Հայաստանի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան փոխ նախարար Կարէն Արիստակէսեանի, Եւրոպական խորհուրդի անդամ երկիրներու մշակոյթի նախարարներուն հաւաքը 2005 թուականին տեղի պիտի ունենայ Հայաստանի մէջ: Հաւաքին նախաձեռնողն է Բանաստեղծ մշակոյթի նախարար Շէյլա Քոփս: Այս տարի մշակոյթի նախարարները պիտի հանդիպին Հարաւային Աֆրիկայի, 2003ին՝ Թունուզի, իսկ 2004ին՝ Մեքսիքայի մէջ:

ՏԵՍԱԿԷՏ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՃՈՅՔԻՆ ՀԱՄԱՐ

Անգամ մը եւս աշխարհի աշխատուորները կու գան նշելու Մայիսի 1ը՝ Աշխատուորներու Միջազգային տօնը: Կու գան նշելու այնպիսի ժամանակամիջոցի մը, երբ միջազգային տնտեսական նոր կարգը, իր նոր ազատական սանձարձակ դրսեւորումով, նոր տեսակի կապերներով կը կաշակագէտ աշխատուորն ու անոր աշխատանքը եւ պատճառ կը հանդիսանայ, որ մարդ անհատը դեռ ամբողջական կարելիութիւնը չուներայ իր աշխատանքին բարիքներէն օգտուելու:

Բնականաբար ժամանակները փոխուած են 1 Մայիս 1886էն ի վեր, երբ Շիքակոյի աշխատուորները իրենց ընկերային տարրական իրաւունքներու ձեռքբերման համար դիմեցին գանգուածային բողոքի արտայայտութեան եւ գործադուլի, որոնց նշումը եղաւ դաժան արիւնով եւ երկաթով: Եւ Շիքակոյի մէջ աշխատանքի սբուրթեան համար գոհուած աշխատուորներուն շնորհիւ էր, որ դէպքէն 3 տարիներ ետք, 1889ին, Աշխատուորական Ա. Միջազգայնականի աւերակներուն վրայ կառուցուած ընկերականացան Բ. Միջազգայնականը որոշում կու տար Մայիսի 1ը նշելու իրեն ամբողջ աշխարհի աշխատուորներէն համերաշխութեան օր:

Ինչպէս վերը ըսինք, այսօր աշխատուորները ալ չափաւ ալ լաւ վիճակի մէջ չեն գտնուիր իրենց իրաւունքներու ձեռքբերման առումով՝ ըլլալ միջազգային, ըլլալ տեղական մակարդակներու վրայ: Աշխատուորներէն շահերը պաշտպանող աշխարհի ամենէն յառաջ դիմական գաղափարխօսութիւնը՝ ընկերականութիւնը, այսօր կը գտնուի մնայուն տեղատուութեան եւ նահանգի մէջ:

Դեռ երեկ միջազգային ընկերակարական շարժումի ամենէն գորաւոր եւ ներկայացուցչական գունդերէն ձեռնարկող ընկերակարական կուսակցութիւնը չարաչար կը պարտուէր երկրի նախագահական ընտրութիւններուն՝ շատ ծանր վնասելով գինը իր աւանդական գաղափարական արժեքներէն հրաժարելուն: Բայց այսօր ընկերակարութեանն է, եւ ուշ կամ կանուր միջազգային ընկերակարական միտքը պէտք է գտնէ իր մէջ բաւական ուժ՝ շրջանցելու համար այս տեղատուութիւնն ու նահանգը:

Աշխատուորին արդար իրաւունքներուն ձեռքբերման համար պայքարը, անոր աշխատանքին ազատագրումը ամեն տեսակի շահագործումէ եւ այդ աշխատանքին բարիքներէն օգտուելու բոլոր կարելիութիւններուն ընդհանուր կը մնայ վերաշխուժեցման եւ իր արմատներուն ամուր յեցած ընկերակարական մտքին գլխաւոր նպատակը:

«Տահագործող ցեցեր» կան ու տակաւին կրնան մնալ: «Ձոր հաց բաժնի հանող»ներ կան ու կրնան մնալ: Բայց նաեւ ապագայի յոյսէն խորակացուցեալ, չարաշահուած եւ շահագործումէ գերծ ընկերութիւն մը կերտելու տեսլականը որեւէ ժամանակե աւելի կը մնայ աշխարհի աշխատուորը ընդհանրութեան հայեարհանքներու կեդրոնը:

Այո՛, ընկերութիւն մը, ուր աշխատուորը չվախեցալ իր նախադրիին վրայ, ուր աշխատուորը չուներայ այն մնայուն երկիւղը, թէ որովհետեւ ինք չի կրնար իր աշխատավարձը բաւարար դարձնել իր պէտքերուն համար, կրնայ որեւէ օր իր տուէն դուրս դուրսիլ: Ընկերութիւն մը վերջապէս, ուր մարդ անհատ չստիպուի զուխը առ ու ձախ գարնել իր եւ իր ընտանիքին ապրուստը ճարելու համար:

Ընկերակար մտածողութեան դասակարգներ իրենց աշխատութիւններուն մէջ գովաբանելով աշխատանքի արժեքը եւ խօսելով ապագայ արդար հասարակակարգի մասին՝ կ'ըսէին, թէ այդ հասարակակարգին մէջ աշխատանքը այլեւս աշխատուորին համար պարտադրանք պիտի չըլլայ: Մարդ պիտի չաշխատի իր ապրուստը ճարելու կամ չճարելու վախը իր սրտին, այլ պիտի աշխատի, ինչպէս պիտի ընէր իր անձնական որելէ մէկ հանոյթը գոհացնելու համար: Ան աշխատանքին պիտի չվերաբերի իրեն ծանր պարտադրանք, այլ իրեն հանոյթ, որ աւելի մեծ թափ կու տայ արտադրութեան եւ ստեղծագործութեան:

Շիքակոյի դէպքերէն 116 տարիներ ետք աշխատուորներ կը մնան պահանջատեր իրենց ընկերային եւ մանաւանդ հանոյթով աշխատելու եւ արտադրելու իրաւունքին: Այդ իրաւունքը ձեռք կը բերուի միայն պայքարով:

ԺԱԲ ՅԱՎՈՐԵԱՆ

ՀԱՍԻԿԱ ՍԱՌԻՆԵԱՆԻ ՀԱՍԵՆ HAMPIG SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

STUDIO Lantern Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ ԵՊ. 01-266866 ԵՊ. 03-695399

ՀԱՅՈՑ ՀԻՒԼԷԱՑԱԾ ԵՒ ՀԻՒԼԷԱՑՈՂ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ

Կայ աշխատանք մը, գոր չենք կատարած, որ անկարելի չէ՝ տուեալ համայնքի մը մէջ ապրող եւ գործող մտաւորական ուժի թուանշաններով ցուցակագրուումը: Մի՞թէ հետաքրքրական պիտի չլըլար գիտնալ, թէ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Արժանթինի, արարական երկիրներու, Աւստրալիոյ, թէ այլ ցօտիներու մէջ քանի հայեր կան գիտական հետազօտութիւններու բարձր մակարդակին, քանի հայեր կան համալսարաններու մէջ՝ իբրեւ դասախօս, քանի հայեր կան լրագրական ասպարէզին մէջ, քանի հայ գրողներ, տնտեսագէտներ, իրաւարաններ, եւ այլն: Այս ցուցակագրման աւերթեր պէտք է ճշդել, թէ անոնց ո՞ր տոկոսը քիչ թէ շատ ներգրուած ունի ազգային կեանքին մէջ, ո՞ր տոկոսը մաս կը կազմէ հայկական կազմակերպութեան մը: քաղաքական, մշակութային, բարեսիրական, եւ այլն: Գիտենք, որ այդ ներկայութիւնը զանգուածային բնոյթ չունի, ուստի, միաժամանակ պէտք է փորձել հասկնալ, թէ ի՞նչ է այդ բացակայութեան պատճառը եւ ինչպէս կարելի է կացութիւնը շրջել:

Այս խորհրդածութեան պատճառը ծանօթ կացութեան մը յիշեցումը չէ, այլ՝ արտադասութիւններ, որոնք ցաւ կը պատճառեն, կը յուզեն եւ քիչ մըն ալ աւելին՝ յուսալքութիւն կը յառաջացնեն: Ապրիլ 24ին, երբ մեծ ընդունելութեան մը համար հարկէ կանգնած էի արձա՛ մուտքի համար, կը գրուցէի երկու հայ պատրաստուած երիտասարդուհիներու հետ, որոնք հասակ առած են հայ ընտանիքի մէջ, հայերէն գիտեն, հայկական կացութեան ծանօթ են, իրենց հաշուութիւնը երբեք չեն դժած, չեն հեռացած ազգային ազգայնէ՛ր, բայց իրենց կարողութիւնները երբեք չեն վերածեր հայկական հաւաքականութեան մէջ արտադասութեան ուժեղացումին, որպէսզի յաւելեալ գիտկարութիւններ խթանուին նաեւ ուրիշներ: Առաջարկեցի, որ իրենց պատրաստութեամբ օգտակար կ'ըլլան եթէ անդամակցին հայկական մշակութային կազմակերպութեան մը: Անոնցմէ մէկը առարկեց, որ իր գործին բերումով ստիպուած է տեւարար բացակայի եւ ճամբորդել, որ ժամանակ չունի, իսկ միւսը պարզապէս ըստաւ, որ աներեւակայելի բան է, որ ինք մասնակցի հայկական միութեան մը, որ նոյնիսկ նման առաջարկ արտառողութիւն է: Այս երկու հայուհիներու հետ խօսեցայ եւ լուսարանուցեայ... Բայց այդ պատրաստութեամբ հարկուողները, եթէ ոչ հազարաւորներ կան Մփիւռքի տարածքին: Թէ ինչն է Եւրոպայի հասած ենք այս անտարբերութեան վեճակին, լաւ է հասկնալ, սակայն աւելի լաւ պիտի ըլլար քննել կացութիւնը, եւ ըսել, թէ ի՞նչպէս այս դրանք ստիպուած պիտի վերադարձնեն ժողովուրդին, քանի որ ազգի մը ներուժը, անմիջական ներկայիս եւ ապագային կերտման համար սերտ աղբրս ունի մտաւորական դրամագլուխին հետ:

Շատեր կը դժգոհին, մասնաւոր բացակայներ իրենք, որ կազմակերպութիւնները մակարդակ չունին: Եթէ այս հաստատումը իրաւացի է, մենք մեզի թոյլ կու տանք հարց տալու, թէ ինչպէս կարելի է մակարդակ ստեղծել, երբ ատակ անձերը չեն մասնակցիր, այդ յանձնառուութիւնը չեն ընդունիր: Ոչ ոք միտաւորաբար չի ստիպուած իր ունի, կ'ենթադրեմ, որ իր սաւանի նման վկայականին համար իր առջեւ կարմիր գորգ պիտի փռուի: Մի՞թէ բաւարար չէ, որ ըստի, թէ իրենց նման անձերու կարիք ունի հաւաքակալուելը: Կարծեմք պատնէքներ ստեղծուած են, տարբերութեան ընթացքին: Մէկ կողմէ կայ գրեթէ արհամարհական վերաբերումը, միւս կողմէ՝ կայ գործակցութեան առաջարկ ընելու պարագային մերժումը: Կը գարմանաւ, թէ ինչու՞ գրականութեան, պատմութեան, արուեստարանութեան մասնագէտներ, գրագէտներ, քանաստեղծներ, գեղանկարիչներ, եւ ուրիշներ մաս չեն կազմեր մեր մշակութային զանազան միութիւններուն, աւելի հարուստ եւ հարգատք բաժնէնք հայկականութեան տակո համար անոնք: Պէտք չէ յիշեն այդ միութիւնները, երբ երաժշտական ձայնապնակ մը հրապարակ կը հանեն, երբ դիրք մը կը հրատարակեն, եւ այլն: Իրենց ներկայութիւնը անոնց կազմակերպական կառուցչին եւ աշխատանքային ծրագրումին մէջ չորս հորիզոններ բանալու կարելիութիւն կը ստեղծէ:

Չիրար տեսնելու եւ իրարու հանդուրժելու հրամայականին առջեւ կանգնած ենք: Կարիք կայ բացատրելու եւ կրկնելու, որ բացակայող որակաւորներու անդամակցութիւնը նոյնիսկ փայլը չունեցող հայկական կազմակերպութիւններու, անոնց կ'ընձեռնէ նոր որակ, հետեւաբար՝ ճառագայթումի հնարաւորութիւն: Պիտի սպասե՛նք, որ մեր միութիւնները դառնան մեծ, լուսաւոր, տիրապան, միջազգայնօրէն ճանչցուած, որպէսզի անդամակցինք անոնց... Թէ՛ եւ հարց պէտք է տալ, թէ մենք կ'ընենք բացուելու ճիգը, ընդառաջ եթէլա՞յ չորս գաղափարներու եւ նոր դէմքերու: Տափակութեամբ, թարմացման մերժումով եւ փակուելով չ'իրականանա՞ր յառաջդիմութիւնը:

Տեսնելու եւ տողալու համար թուրակաբար չ'ընենք՝ ժամանակ չկայ եւ յառաջդիմել:

3. ՊԱԼԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Ստորին կու տանք Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հարցազրոյցը «*Ինքըրօնլի*» լրատու գործակալութեան «*Դիտակ*» ծրագիրին:

ՀԱՐՑՈՒՄ.- Պարոն Օսկանեան, Հայոց Յեղասպանութեան ճանաչման խնդիրը, որպէս Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգային հարց, իրականացման ի՞նչ մոտեցումներ ե ուղղակիք:

ՊՏԱՅՈՒԱՆ.- Հայոց Յեղասպանութեան ճանաչման խնդիրն արդէն չորրորդ տարին է, որ Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգում է, եւ մենք հետաժող ենք այդ խնդրի իրականացմանը: Հայոց Յեղասպանութեան ճանաչման խնդիրը բազմաբնոյթ խնդիր է: Այն իր բնոյթով՝ Եւրոպայական է, Եւրասիական, Եւ իրաւական, Եւ քաղաքական, ինչու ոչ՝ նաեւ տնտեսական: Եւ այս բազմաբնոյթ շերտերից մեր քաղաքականութեան մէջ մենք հետաժող ենք բարոյական եւ քաղաքական խնդիրներին: Առաջին հերթին, ի հարկէ, բարոյականն է, որովհետեւ Հայաստանի անկախացումից յետոյ մեր ժողովրդի բարոյական պարտականութիւնն է հասնել պատմական արդարութեանը՝ 1915 թուականի եղեռնագործութեան նկատմամբ: Այնպէս որ այդ բարոյական պարտականութիւնը մենք գգում ենք ազգովին եւ հետամուտ ենք դրան: Մենք բարոյական պարտաւորութիւններ ունենք նաեւ միջազգային հանրութեան առջեւ որպէս նման դաժան փորձութիւն արած ժողովուրդ: Եւ քանի որ այսօր ցեղասպանութեան խնդիրը քննարկուում է միջազգային յարաբերութիւններում որպէս մարդու իրաւունքների ոտնահարման խնդիր, այդ առումով նոյնպէս բարոյական պարտ ունենք միջազգային հանրութեան առջեւ: Կարծում ենք, որ բարոյական խնդիրը թէ՛ ազգային, թէ՛ միջազգային առումով արդիական է:

Երկրորդ խնդիրը քաղաքականն է: Մենք գտնում ենք, որ այսօր ցեղասպանութեան ճանաչման խնդիրը եւ դրանից բխող խոչընդոտները քաղաքական են: Թուրքիան որդեգրել է ցեղասպանութիւնը ժխտելու քաղաքականութիւնը, որը հիմնադրում է պատմական փաստերի աղաւաղմամբ: Սա արդէն քաղաքական որոշում է: Ուրեմն հասնելու համար ցեղասպանութեան ճանաչման մեր քաղաքականութիւնը յենում է նշուած երկու առաջնահերթութիւնների վրայ: Եւ այդ կապակցութեամբ մեր ջանքերը միտուած են երբեք հիմնական ուղղութիւններում:

Առաջինը՝ հասնել բոլոր երկրների կողմից ցեղասպանութեան ճանաչմանը: Այդ նպատակով մենք աշխատանք ենք տանում տարբեր երկրներին հայ համայնքների հետ: Եւ չնչնք, որ այս չորս տարիների ընթացքում մեծ յաջողութիւններ են արձանագրուել, որոնց զագաթնակէտն էր անցեալ տարւան սկզբներին Ֆրանսայի կողմից Յեղասպանութեան ճանաչումը: այն ընդունուեց արդէն ոչ միայն որպէս յայտարարութիւն, այլ որպէս ժողովուրդ, այլ նաեւ որպէս օրէնք: Եւ յուսով թմ, որ Ֆրանսայի օրինակին կը հետեւեն այլ երկրներ:

Մեզ համար կարեւոր նշանակութիւն ունի Միացեալ Նահանգների կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչումը եւ այսօր մեր ջանքերը ուղղուած են դրան: Անցեալ տարի մենք շատ մօտ էինք այդ ճանաչմանը, բայց Միջին Արեւելքում ստեղծուած ծանր իրավիճակը պատճառ դարձաւ այն բանին, որ նախագահ Քլինթոնն անձամբ միջամտեց, եւ վերջին պահին փաստօրէն կասեցուեց ամբողջ գործընթացը: Սակայն հարցին մենք այժմ էլ հետամուտ ենք: Երկրորդը՝ միջազգային տեսնանքում հարցի հետապնդումն է: Այս հարցում Հայաստանը մեծ աշխատանք է տարել, եւ կան որոշակի յաջողութիւններ եւ առաջընթաց: Ցակարկէս ժընեւում, ՄԱԿի Մարզու իրաւունքների Յանձնաժողովում Հայաստանը եղել է երկու տարրեր բանաձեւերի հեղինակ, որոնցով դատապարտուում է ցեղասպանութիւնը՝ որպէս հարիւր մարդկութեան նկատմամբ եւ կոչ է արուած բոլոր երկրներին ՄԱԿի Յեղասպանութեան յայտարարագիրի հաստատումը եւ նաեւ նրա ոգու եւ տառի կիրառումը իւրաքանչիւր երկրում: Այդ ուղղութեամբ մենք նոյնպէս մեր աշխատանքները կը շարունակենք:

Երրորդը՝ Թուրքիայի կողմից ցեղասպանութեան ճանաչումն է: Այս առումով, ի հարկէ, գործնական որեւէ լուրջ առաջընթաց չկայ, բայց գտնում ենք, որ այդ հարցը պէտք է օրակարգում լինի: Բազմաթիւ քննադատութիւններ են հնչում մեր վարած քաղաքականութեան նկատմամբ, որոնցում ընդգծում է այն հանգամանքը, որ մի կողմից մենք Թուրքիայի հետ յարաբերութիւնների բնականոնացման կոչ ենք անում, միւս կողմից հետապնդում ենք Յեղասպանութեան ճանաչման այդ երկրի

